ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

08-ը Մարտի 2025թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՄԱՐՏԻ 8-Ի՝ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ կանայք, թանկագին մայրեր, քույրեր և դուստրեր.

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ գարնանամուտի ամենասպասված ու պայծառ տոնի՝ Մարտի 8-ի կապակցությամբ:
Այս գեղեցիկ տոնը լավագույն առիթն է հայ կանանց մեծարելու և նրանց բացառիկ դերը հասարակության մեջ ընդգծելու համար: Գնահատելի է կանանց անսահման հոգատարությունը, սերն ու նվիրվածությունը ընտանիքում, ակտիվ ներգրավվածությունը հանրային կյանքում և պատասխանատու գործունեությունը մասնագիտական ամենատարբեր բնագավառներում:
Լավագույն ցանկություններով առանձնահատուկ շնորհավորում եմ Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների կին աշխատակիցներին, որոնք ներդնում են ջանք ու եռանդ, գիտելիքներ և փորձառություն համայնքի զարգացմանն ուղղված շնորհակալ գործում:
Սիրելի՛ կանայք.
Ձեզ վերապահված ամենօրյա աշխատանքը առաքելություն է՝ ուղղված ամուր ու հայեցի ընտանիքների պահպանման, սերունդների դաստիարակության, մարդկային ու ազգային արժեքների տարածման վեհ գործին: Կրկին կարևորելով ձեր անփոխարինելի դերը՝ շնորհավորում եմ Մարտի 8-ի կապակցությամբ, մաղթում եմ լինեք սիրված ու գնահատված, ապրեք առողջ ու երջանիկ, խաղաղ ու բարեկեցիկ կյանքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ